Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է համակարգչային ցուցադրումը:
2. *MS PowerPoint* -ի պատուհանի ինչ բաղադրիչներ գիտեք:
3. Սլայդների դիտման ինչ ռեժիմներ գիտեք:

§5.2. Նոր ցուցադրման ստեղծումն ու պահպանումը

Սովորաբար *PowerPoint*-ի թողարկումով նոր ցուցադրում է ստեղծվում: *Նոր ցուցադրում ստեղծելու* համար կարելի է նաև.

⇨ (*Office*) կոճակով բացված մենյուից ընտրել (*New*) կոճակը,

⇨ բերված *New Presentation* պատուհանում (նկ. 5.2.) ընտրել *Templates* բաժնում առաջարկվող տարբերակներից որևէ մեկն ու սեղմել *Create* կոճակը:



Նկ. 5.2. New Document պատուհան

Templates բաժնում ցուցադրումների որոշ պատրաստի տարբերակներ կան, որոնք այլ կերպ անվանում են *շաբլոններ*: Նման շաբլոնների հիման վրա ավելի հեշտ է նոր, սեփական ցուցադրում ստեղծելը: Ծանոթանանք պատրաստի շաբլոններից մի քանիսին.

- ✓ *Blank Presentation*-ը ցուցադրման դատարկ բլանկ է բացում:
- ✓ *Installed Templates*-ը (նկ. 5.3.) առավել հաճախ կիրառվող ցուցադրումների 6 պատրաստի շաբլոն է տրամադրում:
- ✓ *Installed Themes*-ում առկա շաբլոնները (նկ. 5.4.) թույլատրում են ցուցադրում ստեղծել գունային անհրաժեշտ ձևավորմամբ՝ *ձևավորման ստանդարտ թեմայով*:
- ✓ *My Templates*-ը հնարավորություն է տալիս ընտրել սեփական շաբլոններից անհրաժեշտը:



Նկ. 5.3. Installed Templates շաբլոններ

Նոր ցուցադրում ստեղծելիս էկրանին նոր պատուհան է բերվում, որի վերնագրի տողում գրվում է *Presentation* գրառումն ու կից որևէ բնական թիվ. սա նոր ստեղծվող փաստաթղթի հերթական համարն է, օրինակ՝ *Presentation4*. սա *PowerPoint*-ի կողմից նոր ստեղծվող ցուցադրմանն ավտոմատ կերպով տրվող անվանումն է, եթե մեր կողմից այլ անուն չի տրվել:

Ստեղծված ցուցադրումը համակարգչի կրիչներից որևէ մեկի վրա *պահպանելու* համար անհրաժեշտ է.

- ⇨ *Office* կոճակով բացվող մենյուից ընտրել (*Save As*) կոճակը,
- ⇨ բերված պատուհանում (նկ. 5.5.) պահպանման ենթակա ֆայլի համար ընտրել անհրաժեշտ կրիչն ու ֆայլադարանը,
- ⇨ *File name* դաշտում ներմուծել ֆայլի անունն ու սեղմել *Save* կոճակը:



Նկ. 5.4. Installed Themes շաբլոններ

Արտաքին որևէ կրիչի վրա պահպանված *ցուցադրումը բացելու* համար անհրաժեշտ է.

- ⇨ *Office* կոճակով բացվող մենյուից ընտրել (*Open*) կոճակը,
- ⇨ բերված պատուհանում (նկ. 5.6.) ընտրել այն կրիչն ու ֆայլադարանը, որտեղ պահպանվել է պահանջվող փաստաթուղթը,
- ⇨ ընտրել անհրաժեշտ ֆայլն ու սեղմել *Open* պատուհանի ստորին աջ մասում տեղադրված *Open* կոճակը:

Փաստաթուղթը *խմբագրելուց* (անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց) հետո նորից *նույն անունով կարելի է պահպանել Office* կոճակով բացված պատուհանի (*Save*) հրամանով. նման կոճակ կա նաև արագ հասանելիության վահանակում: *MS PowerPoint 2007* համակարգն իր միջավայրում ստեղծված ֆայլերին տալիս է *pptx* ընդլայնումը:



Նկ. 5.5. Save As պատուհան



Նկ. 5.6. Open պատուհան

Օգտակար է իմանալ

- Նոր ցուցադրում կարելի է ստեղծել նաև ստեղնաշարի *Ctrl* և *N* ստեղների համատեղ սեղմումով:
- Արտաքին կրիչի վրա արդեն պահպանված ցուցադրումը խմբագրումից հետո նորից նույն անվամբ կարելի է պահպանել նաև *Ctrl* և *S* ստեղների համատեղ սեղմումով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ հաջորդական քայլերով է կարելի նոր ցուցադրում ստեղծել:
2. *Installed Templates*-ում ներառված ցուցադրումների ինչ շաբլոններ գիտեք:
3. Թվարկեք *Installed Themes*-ում ներառված ձեզ հայտնի շաբլոնները:
4. Ինչպես կարելի է նոր ստեղծված ցուցադրումը պահպանել:
5. Ինչպես են բացում արտաքին կրիչի վրա նախկինում պահպանված ցուցադրումը:

Լաբորատոր աշխատանք 9

Նոր ցուցադրում ստեղծելու նախնական գործընթացի ուսումնասիրում

1. Հաջորդաբար ընտրելով *Start, All Programs, Microsoft Office, Microsoft Office PowerPoint 2007*՝ մտեք *MS PowerPoint* ծրագրի միջավայր. էկրանին նոր պատուհան կհայտնվի, որի վերնագրի տողում կբերվի *Presentation1* գրառումը:
2. *Office* կոճակով բացվող մենյուից ընտրեք *New* հրամանն ու նոր ցուցադրում ստեղծելու համար պատուհանի աջ մասում բացված *New Presentation* պատուհանի *Templates* բաժնում ընտրեք *Blank and recent* տարբերակն ու սեղմեք *Create* կոճակը. այժմ վերնագրի տողում կհայտնվի *Presentation2* գրառումը:
3. Կրկին ընտրեք *Office* կոճակով բացվող մենյուի *New* հրամանն ու այս անգամ նոր ցուցադրում ստեղծելու համար պատուհանի աջ մասում բացված *New Presentation* պատուհանի *Templates* բաժնում ընտրեք *Installed Templates* տարբերակը:
4. Բերված *Installed Templates* պատուհանում ներառված պատրաստի 6 շաբլոններից ընտրեք առաջին՝ *Classic Photo Album* տարբերակն ու սեղմեք *Create* կոճակը. այս անգամ նոր ստեղծված ցուցադրմանը *Presentation3* անվանումը կտրվի:
5. Ուսումնասիրեք էկրանին բերված դասական ֆոտոալբոմի շաբլոնն ու այն ✕ կոճակով փակեք:
6. Այժմ ընտրեք *Office* կոճակով բացվող մենյուի *New* հրամանն ու բերված *New Presentation* պատուհանի *Templates* բաժնում՝ *Installed Themes* տարբերակը:
7. Բերված *Installed Themes* պատուհանում որևէ թեմա ընտրեք ու սեղմեք *Create* կոճակը:
8. Վերը նկարագրված եղանակով ուսումնասիրեք *Installed Templates* և *Installed Themes* պատուհաններում առաջարկվող շաբլոնների մյուս տարբերակները ևս:
9. *PowerPoint* ծրագրի հետ աշխատանքն ավարտեք՝ օգտվելով պատուհանի փակման ☒ կոճակից: